«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Բնպահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիրակությունը դպրոցում

Առարկան՝ Ֆիզիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Լիդա Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3
Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում----------4
Եզրակացություն----------14
Օգտագործված գրականության ցանկ----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը.

Բնությունը մեզ շրջապատող ամբողջ աշխարհն է, դա այն ամենն է, ինչ մենք տեսնում ենք, լսում ենք, ինչը մենք օգտագործում ենք մեր կյանքի և աշխատանքի ընթացքում: Մենք նույնպես բնության մի մասն ենք: Բնությունը և էկոլոգիան փոխկապակցված հասկացություններ են, բայց դրանք ունեն հստակ իմաստներ: Բնությունը կարող է դիտվել որպես միջավայր իր սկզբնական անձեռնմխելի մասով, իսկ էկոլոգիան, մյուս կողմից, կենդանի օրգանիզմների և նրա շրջակա միջավայրի փոխհարաբերությունների գիտական ուսումնասիրությունն է:

Բնությունն ավելի լայն տերմին է, որն ընդգրկում է ամեն ինչ բնական աշխարհում, մինչդեռ էկոլոգիան գիտական հատուկ դիսցիպլին է, որն ուսումնասիրում է բնության մեջ փոխհարաբերությունները և դինամիկան:

Էկոլոգիա հասկացության հիմքում ընկած է բնությունը, նրա հավասարակշռության պահպանումը, որը շատ վաղուց է սկսված, իսկ նոր ժամանակներում այն դարձել է կենտրոնական հարց, համամարդկային հիմնախնդիր: Մեր օրերում հասարակության առաջընթացը պետք է հիմնվի մարդու և բնության ներդաշնակ զարգացման վրա: Սակայն այսօր ողջ մարդկությանը սպառնում է հասունացող համամոլորակային էկոլոգիական ժգնաժամի աղետաբեր վտանգը: Երկիր մոլորակի վրա կլիմայի փոփոխության մարդածին գործոնի, մարդկային թվի ավելացման հետ կապված բնապահպանական խնդիրները կարող են լինել շատ բազմազան: Կարևոր խնդիրներից են օդային ավազանի աղտոտումը, կենդանիների և բույսերի բազմազանության, ջրային ռեսուրսների պահպանությունը: Էկոլոգիական ստեղծված իրավիճակում հասարակությունն արդեն մոտեցել է սահմանային մի շեմի, որից այն կողմ մարդկության բերեկեցիկ նորմերը պահանջում են արմատական փոփոխություններ թե՛ հասարակության մտածելակերպում ու գիտակցության մեջ և թե՛ բարոյահոգեբանական արժեքային համակարգում: Դա ժամանակի հրամայականն է, որը բխում է Երկիր մոլորակի էկոլոգիական հավասարակշռության պահպանման գերխնդրից: Մարդկության տունը Երկիր մոլորակն է, որն այսօր խնամքի և պահպանության կարիք ունի: Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը: Բնապահպանությունը դարձել է համամարդկային խնդիր և դրա բացասական հետևանքները սպառնում են ամբողջ մարդկությանը: Հետևաբար, բնական ռեսուրսների ճիշտ և խնայողական օգտագործումը, ինչպես նաև արտանետվող թափոնների քանակի կրճատումը և վերամշակումը պետք է սերմանվի հասարակության բոլոր շերտերում: Էկոլոգիական դաստիարակությունն ու էկոլոգիական կրթությունը ներկա ժամանակներում գոյապահպանման պահանջ է:Կարելի է ենթադրել, որ մերօրյա դպրոցականը վաղն ապրելու է էկոլոգիապես ավելի ծայրահեղ պայմաններում, ինչին նա պետք է պատրաստ լինի: Ահա թե ինչու էկոլոգիական կրթության շրջանակներում պետք է ներառվեն տարիքային բոլոր խմբերը, իսկ էկոլոգիապես գրագետ քաղաքացու դաստիարակումը պետք է որակել որպես հանրակրթության պետական

ռազմավարական ծրագրի առաջնային խնդիր: Այսօր ավելի, քան երբևէ մեր մոլորակին անհրաժեշտ է էկոլոգիապես կրթված ու տեղեկացված հասարակություն: Յուրաքանչյուրիս հաղթահարելի պարտքն է պահպանել բնությունը, վերականգնել խաթարված էկոլոգիական համակարգերը: Էկոլոգիական գիտելիքներին պետք է տիրապետի հասարակության յուրաքանչյուր անդամ այնպես, ինչպես թվաբանությանն ու մայրենի լեզվին: Անձի էկոլոգիական կրթությունը, մշակույթը օբյեկտիվ անհրաժեշտություն է, որը բխում է մարդ, հասարակություն, բնություն փոխազդեցության պահանջներից:

Ուստի պատահական չէ, որ ինչպես բազմաթիվ այլ երկրներում, ՀՀ-ում նույնպես, հանրակրթության առանցքային խնդիրներից է համարվում էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը:

Դպրոցներում աշակերտների էկոլոգիական դաստիարակության խնդրում շատ կարևոր է արտադասարանական պարապմունքների և էքսկուրսիաների կազմակերպումը, որի ընթացքում աշակերտների մոտ զարգանում է սեր դեպի բնությունը, հետաքրքրություն է առաջանում մոտիկից ավելի լավ ճանաչել բնությունը, մասնակցել բնության պահպանման խնդիրների լուծմանը:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Թեմայի նպատակ:

· Ինչպես երեխաների մոտ զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ

· Ինչպես լուծել հաղթային բնակավայրերի բնապահանական հիմնախնդիրները.

1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Բնության վրա մարդու ներգործությունն սկսել է մարդու ձևավորման ժամանակաշրջանից: Սակայն, մարդու զարգացման վաղ շրջանում այդ ազդեցությունը եղել է համեմատաբար փոքր: Այդ ժամանակաշրջանում մարդն իր գործունեության հետևանքով հիմնականում ոչնչացրել է խոշոր կենդանիներին և բնակավայրերին մոտ գտնվող բուսածածկ տարածությունները: Սակայն, ժամանակի ընթացքում, մարդու գործունեությունը դարձել է ավելի չմտածված և չգիտակցված, որի հետևանքով ոչնչացվել են հսկայական անտառային զանգվածներ և վերացել են բազմաթիվ կենդանատեսակներ: Ներկայումս՝ արագ զարգացող արդյունաբերության պահմաններում, զգալի չափով աղտոտվում է ողջ կենսոլորտը: Արդեն 20-րդ դարի երկրորդ կեսին, աշխարհը հասկացավ և գիտակցեց, որ բնական ռեսուրսներն ամենևին էլ անսպառ չեն, հետևաբար պետք է գիտակցված և հնարավորինս խնայողաբար օգտագործել այդ ռեսուրսները: Քանի որ բնապահպանության խնդիրների լուծումը համաերկրային բնույթ է կրում, ուստի դժվար է գտնել մարդկային գործունեության մի բնագավառ, որտեղ հնարավոր լինի անտեսել բնապահպանական մոտեցումները:

Աշխարհը դարձել է մարդածին: Այսօր մենք ապրում ենք մի իրականություն, որտեղ տնտեսությունը բացառիկ ճնշում է գործադրում Երկիր մոլորակի վրա. չկա ազատ ոչ մի բնական ռեսուրս: Ամենը՝ ներառյալ կենսաբազմազանությունը, քաղցրահամ ջրերը, մթնոլորտը, օվկիանոսները, անտառները, սառցե ժայռերը և այլն, անմիջական դեր ունեն Երկիր մոլորակի և, հետևաբար, համաշխարհային տնտեսության կայուն զարգացման գործում: Մարդկանց կողմից բնության անխնա և անխիղճ օգտագործման առաջին պատասխան ազդակները նկատվել են դեռևս 1980-ական թթ.-ին (օզոնի շերտի բարակում, ջերմային ալիքների տեղաշարժ, փոթորիկների ակտիվացում, սառույցների հալման արագացում, քաղցրահամ ջրերի պակաս և այլն): Ներկայումս տնտեսական աճն ուղեկցվում է սահմանափակ բնական ռեսուրսների անխնա օգտագործմամբ, և որպես արդյունք՝ բնական աղետի ռիսկի աճով: Տնտեսագետները իրականում ի վիճակի չեն ճիշտ գնահատել բնությանը հասցված վնասները: Ուստի բնությունը արժևորելու համար մենք պետք է փոքր-ինչ հեռանանք տնտեսագիտությունից: Ընդ որում՝ աղքատ երկրներում ապրող հասարակությունը պատասխանատվություն է կրում ավելի քիչ արտանետումների համար: Սակայն ինչպես հայտնի է, տնտեսական աճից ամենաքիչն օգտվում են աղքատ երկրները: Անարդարությունը սրվում է, երբ հարստության կուտակման գործընթացը տեղի է ունենում հարուստ երկրների կողմից բնությունից անխնա «սուբսիդավորման» շնորհիվ, իսկ այդպիսի «սուբսիդիաների» համար վճարում են ուրիշները՝ հատկապես ամենաաղքատ երկրները: Ձեռնարկատիրական գործունեության խթանման և արտադրողականության աճի համար ազատ շուկայական տնտեսությունը պետք է գործի կայուն տնտեսական համակարգում: Անկայուն կլիմայական պայմանները, եղանակային էքստրեմալ դրսևորումները, ապագայում ջրի սակավության հիմնախնդիրները Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից դիտարկվում են բիզնեսի համար

առաջնային ռիսկերի ցանկում: Հետևաբար՝ և՛ կառավարության, և՛ բիզնեսի առջև դժվարին խնդիր է դրվում տնտեսական աճը հավասարակշռել էկոլոգիական կայուն զարգացման հետ:

2. ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Վերջին տասնամյակներում ձևավորվել և բուռն զարգացում է ապրել գիտությունների մի ամբողջ համակարգ՝ Երկիր մոլորակի բնապահպանության և բնօգտագործման վերաբերյալ: «Մարդկության ինքնաոչնչացման վտանգ», «բնապահպանական և բնօգտագործման հիմնախնդիր» հասկացությունները դարձել են համայն մարդկությանը հուզող հարցեր: Շրջակա միջավայրի պահպանություն, միջոցառումների համալիր, որը նախատեսված է մարդկային գործունեության բացասական ազդեցությունը բնության վրա սահմանափակելու համար: Այդպիսի միջոցառումներից կարող են համարվել.

· Արտանետումների սահմանափակումը մթնոլորտ և ջրոլորտ՝ նպատակ ունենալով բարելավել ընդհանուր էկոլոգիական իրադրությունը.

· Արգելավայրերի, արգելոցների և ազգային պարկերի ստեղծումը՝ նպատակ ունենալով պահպանել բնական համալիրները.

· Ձկնորսության և որսի սահմանափակումը՝ նպատակ ունենալով պահպանել որոշակի տեսակներ.

· Թափոնների չթույլատրված արտանետումների սահմանափակումը: Էկոլոգիական լոգիստիկայի մեթոդների կիրառումը տարածաշրջանի տարածքում չթույլատրված թափոններից ընդհանուր մաքրման համար:

3. ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.

Հետազոտողները նշում են, որ ներկայիս հասարակությունը իր բնույթով սպառողական է, որի կարգախոսն է՝ «Ինչքան շատ սպառենք (օգտագործենք), այնքան ավելի լավ՝ տնտեսության համար», որովհետև սպառումը ծնում է պահանջարկ, ինչն էլ խթանում է տնտեսության զարգացումը, որը հնարավոր է իրականացնել՝ ավելի շատ ռեսուրսներ օգտագործելով: Բայց տնտեսական այս քաղաքականությունը տանում է շրջակա միջավայրի աղտոտմանը, ի վերջո՝ բնապահպանական աղետի: Այդ տեսանկյունից՝ էկոլոգիական գլոբալ հիմնախնդիրների շարունակական աճման պայմաններում, երկիր մոլորակի կենսաբազմազանության պահպանման հիմնախնդիրը արդիական հնչեղություն է ձեռք բերում՝ դառնալով համայն մարդկության մտահոգության առարկան: Գնալով աճում է մարդածին և տեխնածին գործոնների, անապատացման և գլոբալ աղտոտման գործընթացների ազդեցությունը շրջակա բնական միջավայրի վրա: Միևնույն ժամանակ քաղաքների կառուցման համար հատվում են անտառներ, ոչնչացվում են տարածքներ, որի արդյունքում

կրճատվում է կենսոլորտի կենսաբազմազանությունը: Խիստ դժվար է ընթանում մաքուր տեխնոլոգիաների կիրառման գործընթացը արտադրության մեջ: ՄԱԿ-ի հիմնական փաստա- թղթերից մեկում՝ «21-րդ դարի օրակարգում» /Ռիո-դեժանեյրո, 1992թ./ ճշվում է, որ մարդկությունն ապրում է իր պատմության վճռական պահը: Մենք բախվում ենք ինչպես պետությունների, այնպես էլ առանձին պետությունների շրջանակներում դարակազմիկ անհամամասնությունների հիմնախնդիրներին՝ չքավորության, սովի, բնակչության առողջության ու անգրագիտության և էկոհամակարգերի վիճակի շարունակվող վատացման սրվող հիմնախնդիրների, որոնցից կախված է մեր բարեկեցությունը: Այս գործընթացից անմասն չեն կարող մնալ կրթական համակարգերը, հատկապես աճող սերնդի կողմից բնության և կենդանի օրգանիզմների մասին գիտելիքների ձեռք բերման, էկոլոգիական իրավիճակների գնահատման, բնապահպանական կարողությունների ու հմտությունների, արժեքային համակարգի ձևավորման և այդպիսով շրջակա միջավայրի հետ ներդաշնակ կեցության առաքելության ստանձնման առումով: Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ մեր հանրապետությունում ընթանում են քաղաքակենտրոնացման, քաղաքաշինության, լանդշաֆտների փոփոխության գործընթացներ, որոնք ծնում են նորանոր բնապահպանական խնդիրներ: Ուստի և հանրակրթության կարևորագույն խնդիրներից է սովորողներին քաղաքային բնակավայրերի, դրանց բնապահպանական խնդիրների վերաբերյալ գիտելիքներ հաղորդել և նրանց դաստիարակել որպես էկոլոգիապես բարենպաստ միջավայրի բնապահպանությամբ շահագրգիռ, կոմպետենտ, պատասխանատու վերաբերմունք ունեցող և էկոլոգիական մշակույթ կրող քաղաքացիներ: Քաղաքային բնակավայրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշ չափով կանխատեսել Երկիր մոլորակի ապագան. ըստ կանխատեսումների՝ մոտ ապագայում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրները հավակնում են դառնալու ամբողջ մարդկության համար նշանակալի գլոբալ հիմնախնդիր, որին կբախվի հողագնդի յուրաքանչյուր բնակիչ: Արդի կրթական բարեփոխումների համատեքստում այդ հիմնախնդիրների ուսումնասիրումը՝ պետք է դիտարկվի որպես հասարակության սոցիալական պատվեր, որպես ազգային և գլոբալ մակարդակի կրթական քաղաքականության գերակա խնդիր, որը կարող է արդյունավետորեն լուծվել էկոլոգիական կրթության շրջանակներում: Քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, ժողովրդագրական տեղաշարժերի արդի պայմաններում աճում է կրթության բովանդակության մեջ քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների շեշտադրման անհրաժեշտությունը, որը սոցիալ-էկոլոգիական, սոցիալիրավական նշանակություն ունի և նպաստում է անձի սոցիալականացմանը: Ելնելով վերոբերյալից՝ մենք կարծում ենք, որ քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրումը ավագ դպրոցում անհրաժեշտ է, իսկ դրա արդյունավետությունը պայմանավորված է համարժեք մեթոդիկայի մշակմամբ: 6 Քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման նպատակային կողմնորոշումները բխում են էկոլոգիական կրթության ընդհանուր նպատակներից /Ա.Ն.Զախլեբնի, Ի.Տ.Սուրավեգինա, Ի.Դ.Զվերև, Լ.Թ.Ասատրյան, Հ.Մ.Ազիզյան, Հ.Հ.Դերձյան, Մ.Ա.Ասատրյան, Ա.Գ.Աջամօղլյան, և այլք/, կայուն զարգացման դրույթներից /Կ.Դանիելյան, Հ.Սարգսյան, Լ.Վալեսյան, Ս.Բալոյան և այլք/ և անձի էկոլոգիական մշակույթի ձևավորման ընդհանուր խնդիրներից /Գլազաչև Ի.Ն., Պլեչովա Զ.Ն., Պոստովիտ

Ն.Ա.,Ստոչկուս Կ., Մարուխյան Ռ., Հովսեփյան Ա. և այլ/: Էկոլոգիական կրթության տարածաշրջանային համակարգի կառուցման և իրականացման մեթոդական տեսանկյունները բացահայտված են Տ.Ա.Բաբակովայի, Ն.Ֆ.Վինոկուրովայի. Լ.Վ.Մոիսեևայի և այլոց կողմից: Էկոլոգիական կրթության մեջ տարածաշրջանային մոտեցումը դիտարկվում է որպես դիդակտիկական առանձնահատուկ սկզբունք, որը թույլ է տալիս ուշադրությունը շեշտադրել բաղաքի և տարածաշրջանի մշակութային, բնական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների վրա՝ դրանց հաղորդելով համամարդկային հնչեղություն: Այնուհանդերձ բաղաքային 6 բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրներին նվիրված գիտամեթոդական հետազոտությունները հիմնականում վերաբերում են բաղաքակենտրոնացման խնդիրներին և բաղաքային բնակավայրերի բնապահպանական մոնիթորինգին: Ուստի բաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրումը ավագ դպրոցում արդիական է և անհրաժեշտ: Էկոլոգիական գիտակցության ձևավորումը դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է, որը ձևավորում է բարոյական մշակույթը և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա: Այն նաև խթան է հանդիսանում էկոլոգիական գիտակցության զարգացման համար:

4. ՄԱՐԴՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ.

Հայաստանում բնաշխարհի վրա ներգործության հետևանքով փոփոխությունների մակարդակը համապատասխանում է բարձր բաղաքակենտրոնացված (ուրբանացված) և զարգացած արդյունաբերություն ունեցող երկրներին ու նկատելիորեն բարձր է հարևան երկրներից: Հանրապետության բնակչության 96%-ը կենտրոնացած է մինչև 2000 մ/բարձրությամբ բնակավայրերում, որը կազմում է երկրի տարածքի 60%-ը, որտեղ բնակչության խտությունը 171 մարդ/կմ² է, բնակավայրերի խտությունը՝ մոտ 6 բնակավայր 100 կմ² վրա, ճանապարհային (երկաթուղային և ավտոմոբիլային) ցանցի խտությունը՝ 0, 85 կմ/կմ²: Հանրապետության տարածքի 12, 7%-ն անտառածածկ է, իսկ 46, 8%-ն ընդգրկված է գյուղատնտեսական օգտագործման մեջ:

1 Մարդու գործունեության տևական և ակտիվ ներգործության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի աղքատացում և որակազրկում, բույսերի և կենդանիների բազմաթիվ տեսակներ հայտնվել են անհետացման եզրին: Այդ երևույթը հատկապես կործանարար ազդեցություն է թողնում տարածման նեղ արեալ ունեցող կենդանատեսակների վրա: Ներկայումս վտանգավոր սահմանագծի է հասել Արաքսի հովտի եզակի, խիստ յուրահատուկ սողունաշխարհը (հերպետոֆաունան): Սևանի ավազանից գրեթե անհետացել է խայտաբղետ մողեսի ենթատեսակի բնաշխարհիկ պոպուլացիան, որը միակն է Կովկասի բարձրադիր վայրերում: Նույն վիճակում է նաև փոքրասիական մողեսը:

2 Հայաստանում բնօգտագործման և բնապահպանական հարցերը կարգավորում է պետությունը. ՀՀ Աժ-ը, իր ընդունած օրենքներից բացի, վավերացնելով համապատասխան միջազգային համաձայնագրեր, միանում է դրանց և պատասխանատվություն ստանձնում երկրում այդ համաձայնագրերի պահանջների

իրականացման համար: Երկրում բնապահպանական խնդիրները լուծելու, կենսաբազմազանության պահպանության ու կենսապաշարների խելամիտ օգտագործման նպատակով մշակվում է նաև ՀՀ կենսաբազմազանության պահպանության ռազմավարություն: Այն խիստ բազմակողմանի ու ծավալուն փաստաթուղթ է, որը ներառում է ինչպես բնաշխարհի վրա մարդահարույց վնասակար գործոնների նվազեցման, էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների ներդրման, էկոլոգիական կրթության ու գիտության զարգացման, հատուկ պահպանվող տարածքների ցանցի ընդլայնման, այնպես էլ այդ ոլորտի օրենսդրական դաշտի հետագա ամբողջացման ու կատարելագործման հարցեր: Շրջակա միջավայրի հանդեպ սպառողական վերաբերմունքը, գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների՝ կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության կորստի, հողերի դեգրադացման և անապատացման, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի աղտոտման, ընդերքի անխնա շահագործման վերաբերյալ մակերեսային ընկալումը հետևանք են էկոլոգիական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակի կամ բացակայության: Հետևաբար նոր էկոլոգիական մտածելակերպի ձևավորումը, հիմնված բնության և հասարակության համատեղ զարգացման սկզբունքների վրա, անհնար է առանց համընդհանուր էկոլոգիական կրթության և դաստիարակության:

Մարդու արտադրած արհեստական առարկաները 10 անգամ ավելի են, քան բնության արտադրածը: Այդ արտադրությունը կարող է որոշ չափով թեթևացնել բնության հոգսը, բայց լուծել չի կարող, որովհետև առաջին՝ մարդու արտադրածի մնացորդներն էլ որպես թափոն թունավորում են բնությունը և երկրորդ՝ դեռևս հարց է, թե այդ տեխնոզանգվածի սննդի հատվածը որքանով է անվտանգ մարդու առողջության, նրա գենետիկական կոդի անփոփոխ պահպանման համար: Ավելացնելով տեխնոզանգվածի արտադրությունը՝ միաժամանակ, կարծում եմ, առաջ ենք բերում թանկարժեք, ծախսատար ռիսկեր: Եվ վերջապես, մեծ է տագնապը, որ սննդի հիմնական տեսակները և միջոցները լաբորատորիաներում արտադրելով, կանտեսենք գյուղատնտեսությունը, որը ցանկացած երկրի արդյունաբերական ապահովման աղբյուրն է:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ.

Բնապահպանական կրթության ծրագիրը սովորողների համար հանդիսանում է կոնկրետ մարմնավորում, որը էկոլոգիական դաստիարակության հետ կապված ուսումնական պրակտիկան է, որն իրականանում է դպրոցներում: Բացի ծրագրի բովանդակության հիմնական հասկացություններից և արժեքներից, ներկայիս մոդելը արժեքավորվում է նաև առաջնային գործունեությամբ՝ կրթական վիճակ, լավագույն փորձ, տեխնիկա, ձևեր, գործիքներ, արտադրական տեխնոլոգիաների առանձնահատկություններ: Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է: Սա ենթադրում է, որ բարոյական և բնապահպանական սկզբունքները բնության կառավարման և խթանման գաղափարների օպտիմալացման, ակտիվ ուսումնասիրության արդյունք է: Ճիշտ օգտագործելով տարբեր ուսուցման

մեթոդներ՝ դաստիարակում ենք էկոլոգիապես գրագետ և ազնվաբարո մարդ: Նպատակը բնապահպանական կրթությունն է, որի ուսուցման ժամանակ առաջ են քաշվում հետևյալ խնդիրները `

1. կրթական

· Գտնել համակարգի բնապահպանական խնդիրների մասին և առաջադրել արդի լուծման ճանապարհներ

· ձևավորել էկոլոգիապես ձայնային վարքի ու գործունեությամբ և առողջ ապրելակերպով անհատ,

2. զարգացող

· զարգացման մտավոր և գործնական հմտությունների ուսուցում, միջավայրի գնահատում և բարելավում, ձգտում ակտիվ աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության զարգացման համար:

· Խելացի (կարողանալ վերլուծել բնապահպանական իրավիճակներ), հուզական (վերաբերմունքը բնության հանդեպ՝ որպես համամարդկային արժեք), բարոյական (կամքն ու հաստատակամությունը, պատասխանատվությունը):

Կազմակերպման յուրաքանչյուր ձև սովորողների հետ ուսուցման գործընթացում խթան է հանդիսանում, զարգացնում տարբեր տեսակի ճանաչողական գործունեություններ: Այլ աղբյուրներից տեղեկությունները թույլ են տալիս կուտակել և բացահայտել խնդրի էությունը, ստեղծականությունը, թույլ են տալիս, որպեսզի անհատը իրական ներդրում ունենա ուսումնասիրության և էկոհամակարգերի խթանման գործընթացում: Բնապահպանական հայեցակարգի ձևավորումը դպրոցներում,սովորողների մոտ «Մարդը և աշխարհը» գաղափարախոսության մեջ տալիս է ուժեղացված էկոլոգիական հասկացություններ, հստակեցնում է զգալի թվով վառ ու մատչելի օրինակներով: Սկսած «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե՛ դրական և թե՛ բացասական իմաստով: Երեխաները ստանում են հատուկ գիտելիքներ բույսերի և կենդանիների մասին: Սովորողների համար մատչելի կերպով պետք է բացահայտվեն հակասությունները առկա հասարակության և բնության միջև: Սովորողներին պետք է ծանոթացնել իրական բնապահպանության առջև ծառացած խնդիրներին: Ուսումնասիրելով «Էկոլոգիա» առարկան իր խորությամբ՝անհրաժեշտ է զարգացնել միջառարկայական կապը կենսաբանություն և աշխարհագրություն առարկաների միջև, տալ ճիշտ ձևակերպում բնապահպանության, էկոլոգիական շղթայի (պարենային կապը օրգանիզմների), բնապահպանական, էկոլոգիական ազդեցությունների մասին: Դիմելով պատմության օգնությանը (հասարակություն-բնություն ներդաշնակ փոխազդեցությունը տեսականորեն հիմնավորելու համար), ուսուցիչը ներկայացնում է գիտական պատճառներ բնությունը պահպանելու, ինչպես կոնկրետ երկրի, այնպես էլ աշխարհի մակարդակով: Իմացական գործունեությունը խթանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է բարոյական որոշում կատարել, և այդ իրավիճակները նպաստում են սովորողների

արժեհամակարգի ձևավավորմանը: Ակտիվանում է նաև ձգտումը՝ գեղագիտական զգացմունքները ստեղծագործական միջոցներով արտահայտելու (նկարչության, բանաստեղծության միջոցով): Արվեստին բնորոշ սինթետիկ մոտեցումը և զգայականությունը դեպի իրականությունը հատկապես կարևոր են բնության պահպանման շարժառիթները զարգացնելու համար:

Անհրաժեշտ է նաև ուսուցանել ամենահարմար մեթոդները՝ վերլուծելու և կարևորելու բնապահպանական արժեքները, շահերն ու կարիքները, նկարչության փորձերի և բնապահպանական դիտարկումների, դասավանդողի հետզրույցների, փաստերի, գործիչների կարծիքների միջև համեմատություն անցկացնելով՝ կառուցել սեփական վերաբերմունք խնդիրների նկատմամբ:

Բնապահպանական ուղղվածություն տվող ոչ ավանդական դասաժամերի կազմակերպման ձևերի թվում են դասը որպես տոն և թեմատիկ դասերը («Անտառի տոն», «Ծառի ու ծաղկի տոն», «Պահպանիր բնությունը» միջոցառումներ): Այսպիսի դասերը սովորողների մեջ ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում հայրենի բնության նկատմամբ:

Երեխաներին դուր են գալիս զանազան մրցույթները: Խաղային մրցույթները համադրվում են ճամփորդությունների և արշավների հետ: Ցածր դասարանի աշակերտները սովորում են խնամել տնային բույսերը, հետազոտում են լանդշաֆտային դիզայնի հնարավորությունները:

Շփվելով բնության հետ երեխան անում է բազմաթիվ բացահայտումներ: Անկրկնելի է յուրաքանչյուր կենդանի էակ, որը տեսնում է երեխան: Շատ բազմազան են նաև բնության մատերիալները (ավազ, կավ, ջուր, ձյուն և այլն), որոնց հետ երեխաները շատ են սիրում խաղալ: Նախադպրոցականները շփվում են շրջակա միջավայրի հետ տարվա տարբեր ժամանակահատվածում՝ երբ շուրջը ծածկված է փափուկ, սպիտակ ձյունով և երբ ծաղկում են այգիները: Երեխայի համար հատուկ նշանակություն ունի մեծահասակի դերը, երբ նա շփվում է բնության հետ, ում հետ միասին տեղի է ունենում երեխայի ճանաչումը շրջապատող միջավայրին: Ոչ մի դիդակտիկ նյութ չենք կարող համեմատել բնության հետ՝ իր բազմազանությամբ և երեխայի զարգացման վրա ազդեցության ուժով: Բնության առարկաներն ու երևույթները տեսանելիորեն բացվում է երեխաների առաջ: Այսպիսով, երեխան անմիջականորեն, զգայական օրգանների միջոցով, ընկալում է բնության օբյեկտների բազմազան հատկությունները. ձևը, մեծությունը, ձայները, գույները, տարածության մեջ տեղադրությունը, շարժումը և այլն: Նրա մեջ ձևավորվում է բնության մասին սկզբնական կոնկրետ և պայծառ պատկերացումները, որոնք հետագայում օգնում են նրան տեսնել և հասկանալ բնության երևույթների կապը և հարաբերությունը, յուրացնում է նոր հասկացություններ: Բնության երևույթների միջև շատ կապեր և հարաբերություններ երեխաները ճանաչում են դիտարկման գործընթացում: Դա հնարավորություն է տալիս դաստիարակին երեխաների մոտ զարգացնել տրամաբանական մտածողությունը:

Իրական, ճշգրիտ պատկերացումների, բնության երևույթների փոխհարաբերության կապվածության կուտակումները ընկած է երեխաների մատերիալիստական աշխարհճանաչման հաջորդական ձևավորման հիմքի վրա:

Շրջապատող միջավայրի օբյեկտների բազմազանությունը թույլ է տալիս դաստիարակին կազմակերպել երեխաների հետաքրքիր և օգտակար գործունեություն: Բնության մեջ դիտարկման, խաղի և

աշխատանքի գործընթացում երեխաները ծանոթանում են բնության երևույթների և օբյեկտների հատկությունների և որակների հետ, սովորում են նկատել դրանց փոփոխությունները և զարգացումը: Նրանց մոտ ձևավորվում է հետաքրքրասիրությունը:

Ստանալով գիտելիքներ և կարողություններ ավագ նախադպրոցականներին առաջարկվում է օգտագործել դրանք պրակտիկայում. երեխաները խոնավեցնում են ավազը, թրջում են ձյունը ավելի ամուր շինվածք ստանալու համար, կավից պատրաստում են այնպիսի շինություններ, որպեսզի կարողանան պահել ջուրը: Այս գործունեության պրոցեսում տեղի է ունենում գիտելիքների հետագա կատարելագործում և մտավոր կարողությունների զարգացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով մարդկության էկոլոգիական դաստիարակությունն անմիջականորեն կախված է էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական կուլտուրայի և գիտելիքների մակարդակից: Մենք այժմ ապրում ենք էկոլագիական այնպիսի ժամանակաշրջանում, որտեղ ամեն պահի կարելի է սպասել էկոլոգիական աղետի: Դա գլոբալ խնդիր է, որը վերաբերում է բոլոր ազգերին: Հայաստանում առկա էկոլոգիական խնդիրները հասնում են մեծ չափերի:

Երկիր մոլորակը համայն մարդկության ամենաթանկ ռեսուրսն է, որի աղտոտումը և անխնա սպառումը անդառնալի և աղետալի հետևանքներ կունենա ներկայիս և հետագա սերունդների համար՝ հարցականի տակ դնելով մարդկության գոյությունը:

Համաշխարհային տնտեսության կայուն զարգացման անցնելու առավելությունները շատ հաճախ անտեսվում են գրեթե բոլոր պետությունների կողմից, բայց հաջողության հասնելու համար պետք է սահմանել տնտեսության զարգացման որոշակի սահմանափակումներ.համաշխարհային տնտեսության կայուն զարգացումը դիտարկելով սոցիալտնտեսական և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիր:

Այսպիսով, մարդկությունը պետք է սովորի կառավարել և՛ իրեն և՛ մոլորակի գործերը, կառավարի այնպես, որ չխաթարվեն հողագնդի վրա մարդկային կյանքի պայմանները, պահպանվի գոնե առկա վիճակը գալիք սերունդների համար: Իսկ մարդկությունը կրթելու լավագույն վայրը դպրոցն է, քանի որ այսօրվա աշակերտները մեր հասարակության հիմքն են:

Այսպիսով, աշակերտներին բնության հետ կապելու, այն լավ ճանաչելու գործընթացում մեծ դեր կարող են ունենալ էքսկուրսիաները: Էքսկուրսիաները բացառիկ նշանակություն ունեն աշակերտների բառապաշարի զարգացման գործում: Դիտելը, զննելը, տեսնելը վարժեցնում են նրանց զգայարանները, իսկ զգայարանն այն դուռն է, որով արտաքինը մտնում, թափանցում է նրա ներաշխարհը: Այն ամենն, ինչը չի անցնում զգայարաններով, առհասարակ հոգեկան աշխարհ չի մտնում, գաղափար չի դառնում: Ուստի, ուսուցման գործընթացում նախ պետք է հանդես գա գաղափար, իսկ հետո՝ բառ, խոսք: Միայն այս ճանապարհով կարելի է մշակել հոգին ու միտքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մելքումյան Լ.Ս., Գալստյան Մ.Հ. -Բնապահպանության հիմունքներ, «Զանգակ -97» հրատարակչություն, Երևան, 2010
2. Լ.Ասատրյան, «Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները» Երևան 2006թ
3. Լ.Ասատրյան, Լ Ավանեսյան, «Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում» Երևան 2003թ
4. Հայրապետյան Է, Շրջակա միջավայրի պահպանություն, Երևան, 2005:
5. Համացանց: